



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԵՎ ԳՈՒՄԻԼԵՎՍԿԻ

2188-2



ԱՄՐՈՆՏՆԵՐԻ
ԻՐԵԶՄԱՆՈՎԸ

ԵՏՂՐԱՏ - 1930 - ՅԵՐԵՎԱՆ



J.

THE NATIONAL
MUSEUM
WASHINGTON, D. C.

1890-1891

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ


ԼԵՎ ԳՈՒՄԻԼԵՎՍԿԻ

ՄԱՄՈՆՏՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ


(ՊԱՏՄՎԱԾՔ)

Թարգմ. ՍԻՄՅԱԿ

17496
A II
38258



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՆՐԵՎԱՆ 1930



Հրատ. № 1318

Գրառեպ. № 5219 (բ) Պատ. № 591 Տիրաժ 3000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում.

I. ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆԸ ՓՈՒԱՐԻՆՈՒՄ Ե ՔԱՄԻՆ

Հնչուն ոգի մեջ տասնմեկ որ կախված եր սառնամանիքի հանգստութիւն: Արտաշնչածն իսկույն յեղյամ եր դառնում, իսկ ուրասից*) ամանով դուրս թափած ջուրը քար-սառուցի սուր կտորների նման ցցվում եր ձյունի մեջ:

Տասներկույերորդ գիշերն անսպասելի կերպով վտռաց ովկիանոսի քամին: Յեղջերուները տայգայից վերադարձան և ուրասի յետևը, մի տասնչորսգլխանի հրեշի նման, կողք-կողքի կանգնեցին: Շները կամաց կաղկանձում եյին, յեղջերուների տաք փորերի տակ կուչ յեկած: Քամին ամեն ինչ ծածկում եր ձյունով: Յեղջերուների անշարժ վողնաշարները մթնում եյին, ու ամբողջ հոտը նմանում եր մի վիթխարի կրյայի վոսկրե մեջքի, վորն արդեն յերկրորդ հազարամյակն ե, ինչ ննջում ե ձյունի մեջ:

Քամին փչում, դուրս եր տանում ուրասից տաքութիւնը, պտուշտ-պտուշտ եր անում կավով սլաղած ցանկապատի մեջ, փուքսի նման փչում եր սջախի մեջ, խառնում ձյունն ու մո-

*) Ուրաս— թափառաշրջիկ յակուտի բնակարան:

խիրը, հանգցնում ածուխները և քշում տանում, հասցնում տայգան:

Գիշերը ցրտից ու քամուց Հյուրի Վորդին արթնացավ: Նա սև գլուխը դուրս հանեց յեղջերուի մորթու միջից, վոր քնելու համար պարկեր կարած, և ականջ դրեց: Քամին ձյունի փոշին ու սառցե շատ բարակ ասեղները խփեց նրա տափակ յերեսին: Այն ժամանակ նա ճարպիկությամբ դուրս սողաց տոպրակից, հողե հատակի վրայով սողաց մինչև մյուս ահագին տոպրակը, ուր քնած էյին մյուսները, և վոտքն անցքից ներս խրեց: Վոտքը սեղմեց հոր կեռացած չորացած ձեռքը: Հայրը չգարթեց, բայց ցրտում վոռնացող շնից ավելի վողորմելի կերպով հառաչեց քնի մեջ:

— Յես ամեն ինչ տվեցի, ինչ վոր պետք էր, ձեռք մի տար ինձ:

Քամին խլացրեց նրա զառանցանքը:

Հյուրի Վորդին, մյուսների տեղը նեղացնելով, մտավ տոպրակը: Հայրը ցավող ձեռքը դուրս քաշեց նրա մեջքի տակից և ցավից խոխուացնելով ճչաց:

— Լսեցի՞ր: Յես վճարեցի բոլորը:

Նա արթնացավ իր սեփական ճշուցից, վոր հիշեցնում էր մրսած շան հաջուց: Նա մարմնի ձևից ու հոտից ճանաչեց վարդուն, ու ճանաչելով՝ կարճ հարցրեց:

— Դու յն՝ս, Անդրեյ:

Անդրեյը ծիծաղեց.

— Յորերը*) վոռնոց ու քամի յեն բարձրադրել: Ածուխները հանգել են: Մըսոււմ եյի:—Նա արմունկով խփեց հոր լերկ կրծքին ու հարցրեց. — չլինի՞ յերազում դու են հյոււրի հետ եյիր խոսում, վորի պատվին ինձ Հյոււրի Վորդի յեն ասում:

Յավից հառաչելով՝ հայրը հնազանդությամբ պատասխանեց.

— Այդ նա յեր: Յորերը քամու հետ բերել եյին նրա ստվերը: Ու նա նորից մկըտեց քեզ, անունդ դրեց Անդրեյ, ինչպես ուսաներին են ասում, ու յես չկարողացա չկատարել նրա ասածը, վորովհետև նրա շորի վրա փայլուն կոճակներ կային, ու նա ուսաց ցարի հարկի փոխարեն մորթիներ եր հավաքում:

— Զարգված վոտքով հին դայլ, դու յել նրա հետ կրակե ջուր եյիր խմում, չե՞:

Հայրը յետ քաշվեց վորդուց, վախենալով, վոր արմունկով կխփի իր լերկ կրծքին: Վորդին սեղմեց նրա հիվանդոտ թևը:

— Գոհ յեղիր ծերունուց**), վոր դա հյոււրի միայն ստվերն եր:

*) Յորեր—չար վոգիներ, վորոնց գոյությանը յակուտները հավատում են:

**) Յակուտներն ասածուն ծերունի յեն ասում:

Մայրը լսեց այս խոսքերը: Նա մարդու վրայով անցավ ու պառկեց նրա և վորդու միջև: Հյուրի Վորդին սեղմվեց մոր տաք մարմնին, տաքացավ և քնում եր:

— Քեզ Հյուրի Վորդի յեն ասում, վորովհետև դու խորամանկ ես ուսս հյուրի նման, վորը մկրտեց քեզ և իր անունի պես քեզ ել ուսի անուն տվեց: Ու մենք արեցինք այնպես, ինչպես նա յեր ուզում, վորովհետև հյուրը—դա սոխայի*) բնակարանում տեր ու տնորեն ե:

Նա ձեռքը դրեց վորդու գլխին և շարունակեց խոսել լսելով քամու վոռնոցին և իր յերդող ձայնին, վոր խառնվում եր քամու վոռնոցին:

Ծեր Իվանան, իմ ամուսինն ու ջո հայրը, նման ե հալածված յեղջերուի: Նա չի կարող սոխատ**) սպանել, վորպեսզի կերակրի մեզ, ու դու մեր տան տերը դարձար: Մենք լսում ու հպատակվում ենք քեզ: Բայց միթե դու սոխա չես: Դու սոխա յես, թեև քեզ Հյուրի Վորդի յեն ասում:

Նա ականջ դրեց քամուն ու վորդու շնչառությանը և ականջ դնելով շարունակեց կամաց յերգել:

*) Սոխա լակուտ: Յակուտներն իրենց լեզվով իրենց այդպես են ասում:

**) Սոխատ—լերևի նշանակում ե վորսի կենդանի կամ դադան: Ծ. Թ.

- Տամուզները *) տասներկու կայան ե գալիս են մեր յետևից, և տասերորդ կայանում նրանք քո քրոջ Մա-այի փոխարեն առաջարկեցին մի սահնակ աղվեսի, կզաքիսի, սամուլբի և կապույտ աղվեսի մորթիներ: Մա-այի աչքերն ավելի փայլուն են, քան այն գետը, վորի անունը կրում ե նա, վորովհետև հենց եղ գետի ափին ել ծնվել ե նա. բայց մի՞թե տամուզները քիչ են առաջարկում նրա փոխարեն: Ու մենք նրան կնուխան չտվեցինք տամուզներից ամենից հարուստին, վորովհետև նա սոխա չե, այլ տամուզ: Որենքն եղպես ե. թող Մա-ան լաց լինի, վորովհետև սիրում ե տամուզին, թող սամուլբներն ու կապույտ աղվեսներն իրենց մնան: Մենք հնազանդ ենք որենքին, այնպես, ինչպես և դու, տեր:

Քամին թպրտում եր ուրասում, պտտվում եր ոջախում, ավելում եր մոխիրը: Շները, ձյունի մեջ թաղված, վռնում եյին յեղջերունների տաք փորի տակ:

Հյուրի Վորդին մի ձեռքը զլսի տակ դրեց, իսկ մյուսով մորթը քաշեց և ծածկվեց ցրտից ու քամուց:

Մայրը յերգում եր հազիվ լսելի ձայնով.

*) Տամուզ — տունգուս:

— Քամին ծածկում է հեռքերը, ու յորերը չար գործ են կատարում: Տամուզի աչքերը փայլում են սիրուց, յերբ նա նայում է Մա-ա-յին: Քամու հետ յորերն ի՞նչ կշնջան այս գիշեր նրա ախանջին:

Փակված տոպրակում խեղդիչ էր ողբ. պառավի աչքերը փակվում էին: Նա շոյեց վորդու գլուխն ու ասաց. — «Քնիր, տեր իմ» — ու քնեց հանկարծ, ընկնելով յերազի մեջ, ինչպես ջրի մեջ ընկած քարը:

Հյուրի Վորդին տաքանում էր մոր և յեղբոր մարմնի ջերմությամբ ընդհանուր անկողնում. նա շնչում էր հոր և քրոջ շունչը ու տաքանալով խոր քնեց, մտածելով անցած ճանապարհի հողնածության մտախն:

Մեծ էր ճանապարհը, ինչպես և այն նպատակը, վորին մոտենում էր նա:

Յերկրորդ ձմեռն էր, վոր Հյուրի Վորդին շարժվում էր դեպի Սառուցյալ ովկիանոսի ափերը: Նա գալիս էր Մա-յի մոտից, ուր ծնվել էր նրա քույրը: Մա-յի մոտ, յեղեգնուտում նրա հայրը հանդիպեց մի չտեսնված գազանի, վոր ընդմիշտ հաշմանդամ դարձրեց նրա ձեռքը: Հյուրի Վորդին իր ձեռքերով խեղդեց դեղին շանը. ու այն ժամանակ գազանին ու հոր վերքերը տեսնողներն ասում էին, թե Հյուրի Վորդին վազր է սպանել:

Մա-յից գնում եյին Ալղանով մինչև նրա
 Լինա թափվելը, Լենայով ցած եյին գնում մին-
 չև գետաբերանը—գեպի Յեզների հրվանդանը,
 վորից բախտավորները կարող եյին հասնել մինչև
 Մամոնաների գերեզմանոցը:

Իսկ վազրին սպանողը մի՞թե բախտավոր
 չեր:

Հյուրի Վորդին հաստատուն քայլերով ա-
 ռաջ եր գնում:

Նրանք կանգ եյին առնում սպանած վորսի
 մոտ և մնում եյին մինչև սպանվածի միսը հատ-
 նելը: Ուրասում վառվում եր կրակը—ապրիստ-
 վում եր միսը: Յերբ միսը վերջանում եր, մի-
 քանի որ տաք թեյ եյին խմում, լուռ պառկում
 և, շան փաղաքշանքով, աչքերով հետևում եյին
 Հյուրի Վորդուն:

Սովն անտանելի յեր դառնում:

Հյուրի Վորդին վերցնում եր հրացանն ու
 յեղբորը, դազանի հետքով առաջ եր գնում,
 հետևում եր, դարան մտնում և կայծքարավոր
 հրացանով անվրեպ սպանում:

Վանենոկը յետ եր դառնում կայանը: Դա-
 հուկները (ЛЫЖИ) նրա յետևից չոր ձյունի ամպ
 եյին բարձրացնում:

Հյուրի Վորդին մնում եր սպանածին պահ-
 պանելու: Սոխատի ահագին լեշը սառչում եր

ձյունի վրա: Հյուրի Վորդին ազդրից կտրում
 եր մի յուզոտ կտոր և ուտում:

Վանենոկը վոր գալիս եր, ուրասում ազ-
 մուկ ու շարժում եր սկսվում: Մահնակի վրա
 եյին դարսում ամեն ինչ, նույնիսկ ուրասի պա-
 տերը: Վանենոկը լծում եր յեղջերուներին, շնե-
 րը քշում եյին հոտը և բոլորը միասին—մար-
 դիկ, շներ, յեղջերուներ, ունեցվածք—այդպիսով
 առաջ եյին շարժվում քսան, յերբեմն յերեսուն
 վերաս—հաջող վորսի տեղը: Նոր տեղում, հենց
 վորսի մոտ, ձյունը փորում եյին, ձողեր տըն-
 կում, մորթիներ կախում, ձյունով ծածկում,
 պատուհանների տեղ սառցի կտորներ դնում,
 ոջախում կրակ վառում, հետո միսն ուտում
 եյին մինչև վերջանա:

Հետո թեյ եյին խմում, միքանի որ լուռ
 պառկում քնում եյին, ծույլ-ծույլ շարժվում
 եյին ու սպասում հլու, մինչև վոր Հյուրի Վոր-
 դին կվերցնեք հրացանն ու Վանենոկին:

Յերկրորդ ձմեռն եր այդպես շարժվում
 Հյուրի Վորդին, այդպես նրա յետևից գնում
 եյին հայրը, մայրը, քույրն ու յեղբայրը: Նա
 կերակուր եր տալիս նրանց, և նրանք իրենց
 տերն եյին անվանում նրան ու չեյին հարցնում,
 թե ուր ե տանում իրենց:

II. ՔԱՄԻՆ ՄՈՏԵՑՆՈՒՄ Ե ԳԱՐՈՒՆԸ

Գիշերը Հյուրի Վորդին աղմուկ ու ձայներ եր լսուս: Նա յերազի նման ժպտաց և աչքերը ըաց չարավ:

Քամին ոջախը մաքուր ավլեց: Թեյամանում ջուրն արդեն վաղուց սառցի կտոր եր դարձել, յերբ Հյուրի Վորդին արթնացավ: Նա ձեռքը մեկնեց դեպի գլխավերևը և անցքը չզրտավ: Հյուրի Վորդին ցատկեց ծնկի, դուրս գալու անցքը փնտռելով:

Նա դրսից կապված եր: Հյուրի Վորդին հրեց հորը, շոշափեց մոր վոսկրոտ մեջքը, գտավ Վանենոկի գլուխը, բայց նրա մատները վոշ մի տեղ չզգացին քրոջ վողորկ մորթը: Կրակե չարությամբ լցվելով, նա կանգնեց տոպրակում ու աղաղակեց.

— Չլինի՞ դձև յես եստեղ մեզ կապուտել, Մա՛նա:

Վոշվոք չպատասխանեց: Յեղջերուի կաշին ամուր ե, դանակը մնացել եր շորի գոտու վրա—դուրսը:

Հյուրի Վորդին վտաքերով ճնշում եր հոր լերկ կուրծքը, ձեռքերով քաշքշում եր տոպրակը և հուսահատ հառաչում:

— Ատամներով կրծի՛ր,—ասաց հայրը,—

այստեղ տամուզներ կային: Նրանք զողացան Մա-ային, ինչպես քաղցած գայլերը զողանում են ննջացող յեղջիրուն:

Հյուրի Վորդին մի ծալք կաշի զրեց բերանն ու սկսեց կրծել: Չոր կաշին ճոճուում էր սուր ատամների տակ: Հոգնելով նա ընկավ հեծկտացող մոր գլխին ու այն ժամանակ իր վերևը կրծած կաշվի միջով նա ցերեկվա լուսի մի աստղ տեսավ:

— Կրծիր,— կրկնեց հայրը,— կրծելով մի ծակ բաց արա, վոր ձեռքդ անցնի:

Հյուրի Վորդին կրծում էր կատաղությամբ: Բերանում տաք արյան ծանոթ համն զգալով, նա կանգ առավ: Նա մատներով շոշափեց ատամներն ու շարժեց այն ասամբ, վոր ցավում էր:

Հայրը խոստոս ձայնով ասաց.

— Քամին կծածկի հետքերը, ու վոչվոք չի գտնիլ նրանց հետքերը, ովքեր զողացան աղջրկանը: Շտապիր: Լենայում քար գտնե՛ն ավելի հեշտ ե, քան թե տայգայում մարդ գտնելը: Կրծիր, վորովհետև իմ ատամներով չի կարելի կրծել նույնիսկ այն տամուզի կոկորդը, վոր զողացել է կիս-ին *):

Հյուրի Վորդին կրծելով ծակեց տուրակը:

*) Կիս — աղջիկ:

Որվա լուսով այդ անցքը փոքրիկ արևի յեր նման: Հյուրի Վորդին մատներն անցկացրեց այդ սպիտակ արևի մեջ և պատուեց կաշին: Նրա մատները սաստիկ ցավեցին:

Հայրն աղաղակեց.

— Պատրաստ ե: Նայիր՝ ինչ կա դուրսը:

Հյուրի Վորդին շունչ քաշեց, ձեռքերը հանեց և պատուեց կաշին, վոր նրա կատաղած ձեռքերի ուժի տակ ել դժվարությամբ եր պատովում:

— Գնա, — աղաղակեց հայրը:

Հյուրի Վորդին դուրս յեկավ անցքից: Նրա մերկ ուսերին կաշվից ձյուն թափվեց: Նա դուրս ցատկեց տոպրակից և առանց հագնվելու, թռավ դեպի շեմքը: Այնտեղ ձյունով ծածկված մի կույտ մորթի կար: Մուտքը բաց եր, քամին սառցե ձյուներ եր լցնում ուրասը: Հյուրի Վորդին մերկ ձեռքերով բարձրացրեց մորթիների կույտը: Աղվեսների կաշվի տակից յերևացին կապույտ աղվեսների ու սամույրների մորթիները:

— Փրկանքն ե. — ծիծաղեց Հյուրի Վորդին, — Մա-ան արժե սրան:

Հայրը ցրտից ու զայրույթից դողալով, դուրս սողաց տոպրակից: Նա ինքը հագնվեց և վորդու շորը վրան գցեց: Հյուրի Վորդին հագնվեց և նստեց շաղ տված մորթիների վրա, տաքանալով յեղջերուի մորթու ջերմությունից:

Հայրը, զայրույթից ու անեծքից շնչասպառ, փաթաթվել, հարսնյակ եր դարձել: Նա գոտուց հանեց դանակը և գետնի վրա գլորվելով, յերկու կապույտ ալվեսի մորթի կտոր-կտոր արավ, մինչև վոր կարողացան բռնել նրան:

Հյուրի Վորդին դանակը խլեց նրա ձեռքից: Այն ժամանակ հայրը խռպոտ վոռնոցով դուրս սողաց ուրասից. նրա վոռնոցի վրա շները դուրս թափեցին յեղջերուների տակից: Նա շուտով վերադարձավ: Հյուրի Վորդին հեգնական ծիծաղով նայեց նրան, ու նա մռայլ պատասխանեց.

— Արդեն վոչ մի հետք չկա: Քամին ձնե ամպեր ե տանում: Յորերն ոգնում են նրանց: Նրանք քո հոտից ամենալավ յեղջերուները տարել են և իրենցը թողել: Նրանցից մեկն ինձ նման սատկում ե: Դանակդ վերցրու և մորթիլ:

Նա ձեռքերով սեղմեց գլուխը և վոռնաց չորացած ձեռքի ցավից և հուսահատ տանջանքից:

Հյուրի Վորդին դանակը յետ արավ գոտուց և, առանց հորը նայելու, դուրս գնաց:

Մայրը դուրս սողաց տոպրակից և կանչեց վորդուն.

— Վանենո՛կ, շուտ ետտեղ արի: Գողերը մի հոգնած յեղջերու յեն թողել, Անդրեյը դուրս

զնաց նրան մորթելու: Յես կրակ եմ վառում:
Այսոր ուտելու բան կունենանք:

Մոր յետևից դուրս սողաց մերկ, մութ
գույնի մորթով մի մարմին: Նրանք հագնվե-
ցին, աչքներին ձյուն քսեցին և քնից հետո իրեն
թափահարող շան արագությամբ սկսեցին նայել
մուտքին: Հյուրի Վորդին վերադարձավ և հետը
բերեց յեղջերուի քերթած միսը: Նա կաշին մի ան-
կյուն շարտեց և իր յետևից քարշ տվեց վարդա-
գույն տաք-տաք մսի մի կույտ: Վոշվոք չմոտե-
ցավ մսին, մինչև վոր Հյուրի Վորդին կտրեց
ամենալավ կտորը և կերավ—այնքան, վոր մնա-
ցորդ մնաց:

Նա ուտում եր դանդաղ: Մայրն ու Վանե-
նուկը, նույնիսկ հայրը, վոր մի ըոպե դադարել
եր վոռնալուց, նայում եյին նրա՝ յեղջերուի արյու-
նով թաց յեղած շրթունքներին, նրա չափով ու
դանդաղ շարժվող ծնոտներին:

Հյուրի Վորդին կուլ տվեց վերջին կտորը և
դանակը տվեց հորը: Նա կտրեց իր կտորը, և այն
ժամանակ բոլորն սկսեցին նայել նրա ծնոտնե-
րին, նրա՝ քաղցից ու դողոցից կծկվող շրթունք-
ներին:

Ջերմությունը համակեց Հյուրի Վորդու
կուրծքը: Նա հիացմունքով դիտում եր մորթի-
ները: Հայրը խուպոցով գոռաց.

— Այդ մորթիները կարտիր, կտոր-կտոր, վորովհետև մենք տամուզից փրկանք չենք վերցնում: Վերցրու դանակը և փնտուիր մեզ վիրավորանք հասցնողին. ու չվերադառնաս, մինչև վոր գողի կուրծքը այնպես կտոր-կտոր չանես, ինչպես ես մորթիները:

Հյուրի Վորդին նայեց հորը ու դանակը նրա ձեռքից խլելով, տվեց մորը:

— Թո՛ղ մայրս ու Վանենոկն ուտեն, — առայ նա ու արհամարհանքով նայեց հորը. — միթե դու չլսեցիր, սատկած շուն, թե տամուզներն ինչպես կապկպեցին քեզ: Թե՛ տոպրակի մեջ քեզ քո աղջիկը կապկպեց, վորովհետև դու չես կարող նրան կերակրել:

Հայրը չպատասխանեց: Նա նայում էր, թե մայրն ինչպես կտրեց վարդագույն լեշից մի կտոր և տվեց Վանենոկի մեկնած ձեռքը: Հյուրի Վորդին արհամարհանքով վտտքով հրեց յեղջերուին.

— Քեզնից ավելի քիչ ոգուտ կա, քան ես հոգնեցրած յեղջերուից, ու յես քեզ չպիտի լսեմ: Մա-ան դնացել ե նրա մոտ, ում սիրում եր: Մի՛թե տամուզը մարդ չի: Գնա՛, ցախ հավաքիր. եդ աշխատանքի համար յերկու ձեռք չի հարկավոր:

Հայրը մոր ձեռքից մի կտոր միս հափշտա-

կեց ու սկսեց ուսել, շտապելով ու մեծ կտոր-
ներից ու շարությունից խեղդվելով:

— Յես ինքս կհասնեմ նրանց: Տամուզի
արյունը կլվանա վիրավորանքը:

Հյուրի վորդին յերեսը շուռ ավեց:

— Քամին մտտեցնում ե գարունը, — ասաց
նա, նայելով ոջախի մեջ պտտվող ձյունին, — ու
այս գարնանը յես կգնամ Մամոնտերի գերեզ-
մանոցը: Ռուսները մամոնտի վոսկրները աղվե-
սի ու կգաքիսի մորթուց ավելի յեն գնահա-
տում: Փարնանային լճերում յես այնքան կվոր-
սամ նրանցից, վոր կբավականանա, վորպեսզի
դրա փոխարեն Սլդանում ինձ մի ուսուսկան
վառարան, մի ուսուսկան խրճիթ և մի ուսուս-
կան այնպիսի մեքենա տան, վորը հաց ե շի-
նում: Ռուսները ձմեռն ել այնպես լավ են ապ-
րում, ինչպես և ամառը: Նրանք ձմեռվա գի-
շերներից չեն վախենում, վորովհետև նրանք ի-
րենք խրճիթում արեզակ են վառում: Յես ել
նրանց նման խորամանկ կլինեմ. ձմեռը յես
թուշուկների ձու, կովի կաթ, աղ դրած սաղմոն*)
ու հաց կուսենամ: Իմ ձեռքը չորացած չի լի-
նիլ, ինչպես վիրավոր գայլինը:

— Տամուզները գողացել են քո քրոջը, ու
դու վրեժխնդիր կլինես, — ասաց հայրը:

*) Սաղմոն — սիրիրական ձուկ: Մ. Թ.

Հյուրի Վորդին նայեց նրան.

— Գնա՛, ցախ բեր, պառավ դամփու: Դու այն բանի մասին ես խոսում, ինչ վոր մեռավ, վորովհետև մեռան քո որենքները, ու քո կյանքը մարում է դանդաղ, ինչպես ոջախի ածուխներինը: Լռի՛ր ու գնա՛: Մի խանդարի՛ր ինձ: Իսկ յեթե դու քո գործին չես գնա, ապա յես քո մյուս ձեռքն ել կոտրեմ ավելի վատ, քան դեղին շանը: Աղբի կտոր:

Հայրը գլխարկի շեկ ծալվածքներն իջեցրեց ճակատին ու ականջներին, ծածկվեց մորթիներով ու հնազանդ դուրս սողաց ուրասից: Հյուրի Վորդին նայեց նրա յետևից և մոր ձեռքից վերցրեց վարդագույն մսի կտորը:

III. ԳԱՐՈՒՆԸ ՏԱՆՈՒՄ Ե ԴԵՊԻ ՆՊԱՏԱԿԸ

Կարճ ցերեկներն ու յերկար գիշերները վըշում եր քամին: Ոջախում մխում եյին ածուխները, ածուխների վրա ապխտվում եր միսը: Հյուրի Վորդին պառկած եր մորթիների վրա շատ ուտելուց կապարի նման ծանր ստամոքսով ու մտածում եր ռուսների խրճիթներում վառվող արեգակների մասին:

Տոպրակների մեջ պառկած եյին հայրը, մայրը և Վանենոկը: Նրանց ստամոքսներն ել կուշտ ծանրացած եյին, և նրանք ել չեյին ուզում շարժ-

վել ու խոսել: Հագեցումից նրանց ականջները
թշուռւմ ելին. ծարավը տանջում էր, բայց յեղ-
ջերուի միան ամբողջովին չեյին կերել ու թեյ
չեյին խմում, այլ ձյուն ու սառուց եյին կու-
տալիս: Քունն այնպես անսպասելի արագ էր դա-
լիս նրանց վրա, ինչպես և արթնանալը: Արթ-
նանալով, նրանք միս, ածուխների վրա հալված
քնքուշ ճարպ եյին ուտում ու սկսում եյին
շարժել իրենց ծնոտները—հոգնածությունից հա-
լից ընկած:

Յերբորդ որն առավոտյան յեղջերուն կերել
եյին: Մայրը թեյամանում ձյուն հալեց, ջուրը
յեռացրեց և սև աղյուսե թեյ յեփեց:

Յերբորդ ամբողջ որը է չորբորդ որն առա-
վոտյան թեյ խմեցին: Գիշերը քամին հանդարտ-
վեց: Սառնամանիքի խաղաղությունը կախված
էր ողում: Շնչառությունը թուխպ էր դառնում,
խսկ ամանով ուրասից դուրս թափած ջուրը կարո-
ղանում էր ձյունի մեջ սև վերքերի նման այր-
վածքներ անել, ինչպես բորոտի մարմնի վրա:
Յեղջերուները գնացին տայգա, և Հյուրի Վորդին
վերցրեց հրացանը:

Տափակ դեմքերի նեղ ճեղքվածքների միջով
վեց սև ու փայլուն աչքեր շան փաղաքշանքով
հեռուում եյին Հյուրի Վորդուն ու նրա հրացա-
նին: Հյուրի Վորդին ասաց Վանեսուկին.

— Գնանք:

Ու յերկուսով, մորթու մեջ փաթաթվելով, դահուկները կապեցին: Ուրասից դուրս գալով՝ Հյուրի Վորդին ականջ դրեց: Հեռու, լեռնային բլուրեղի նման պայծառ բարձունքում փչում եր քամին, և յակուտի սքանչելի լսողությունը լսում եր այդ:

— Քամին յետ ե գնում,—ասաց նա,—քամին մեզ կըշի դեպի ծովը: Խարա-ուլախ սարերը վերջանում են: Մենք լիջնում ենք բաղարաները *): Քիչ ճանապարհ ե մնացել: Մենք ավելի շուտ կմտնենք Յեզների հրվանդանը, քան թե սագերը ճանապարհ կրնկնեն, ու Մամոնաների դերեզմանոցը կգնանք կարապների հետ, վորպեսզի ուտենք նրանց ձվաները:

Հյուրի Վորդին մի աման ջուր դուրս բերեց և սրսկեց Վանենոկի թիկունքին, Վանենոկն ել սրսկեց Հյուրի Վորդու թիկունքին: Զուրը մորթիների վրա բարակ ապակե ծածկոցով պատեց, ու նրանց շորերն անթափանցելի դարձան քամու հանդեպ:

Հյուրի Վորդին ժպտաց յերկնքի հանգստության համար, վորը միայն նրան ըմբռնելի մոտեցող փոթորիկ եր գուշակում, հրացանն ուսը պցեց ու ձեռքն առավ ձողերը:

*) Բաղարտ—ճահիճ:

—Քամին մոտեցնում ե զարունը և ճահիճները ձյունն ուռեցնում ե, ինչպես հարբեցողի զըլխի մազերը, — ծիծաղեց նա, — դնանք զեպի բազարաները, այնտեղ վորս կլինի: Քամին նրանց ազատել ե ձյունը քանդելու զժվարությունից, վոր ձյունի տակից յեղջերուի մամուռ հանեն:

Վանենոկի սև բիբերը փայլեցին աչքերի նեղ անցքերում: Նրանք վառվում էյին վորսորդական ազահությամբ: Հյուրի Վորդին սահնակներով չոր ձյունի ամպեր բարձրացնելով զնում եր նրա յետևից և ասում եր.

—Այժմ յես քեզ պետք ե սովորեցնեմ հետևել վորսին և անվրեպ կրակել: Եսոր մենք հեռու կգնանք: Ծույլ յակուտը, յեթե նա կուշտ ե, առաջ չի գնալ: Նրանք մեզ յերկար կսպասեն ու են ժամանակ արագ առաջ կգնան: Յեթե յես Մամոնաների զերեզմանոցից չվերադառնամ, դու կլինես տան մեջ մեծը և կկերակրես մեր հորն ու մորը:

—Իու կվերադառնաս, — ասաց Վանենոկը, — վորովհետե զու Հյուրի Վորդին ես և խորամանկ ես, ինչպես ուռաները: Բայց մայրը ինձ համար տասնուչորս զարուն ե հաշվում: Յես հասակավոր եմ:

Հյուրի Վորդին աչքերը փայլեցնելով ծիծաղեց.

— Այո, յես քեզ կսովորեցնեմ հրացան բռնել և հետևել գազաններին: Բայց ավելի լավ կլիներ, յեթե դու սկսեիր ապրել այնպես, ինչպես ուսաներն են ապրում:

Վանենուկը նայեց յեղբորը:

— Ինչո՞ւ:

Հյուրի Վորդին դանդաղ եր գնում, հեշտությամբ սահելով ձյունե տափաստանի անապակ ծածկոցի վրայով:

Վանենուկն ասում եր.

— Մի՞թե ուսաները մեզ քիչ պատժեցին, յերբ այրում եյին մեզ կրակե ջրով: Ու մի՞թե մեզնից սամույր, կգաքիս և կապույտ աղվես չխլեցին նրանք, վորոնք ամառվա արևի շոգի նման՝ աչքերը կուրացնող փայլուն կոճակներ ունեյին:

Հյուրի Վորդին ծիծաղեց:

— Ռուսներն ել փայլուն կոճակներ չեն կրում, նրանք սպանեցին թագավորին, վորին հրպատակողները նեղացնում եյին յակուսներին:

Հյուրի Վորդին նայեց ձյունի ծովին, մեկնեց ձողը, ցույց տալով ձյունի ամբողջ տարածությունը, վոր հորիզոնում ձուլվում եր կապույտ յերկնքին:

— Ռուսը գիտե, թե յերկինքն ինչու յե կապույտ, ձյունն ինչու յե գալիս, յերկիրն ինչպես ե բուսել: Իսկ մի՞թե դու չեյիր ուղենա գի-

տենալ յերկնքի ճանապարհը և յերկրի շուրջն
այնպես լավ, ինչպես գիտես Մամոնաների գե-
րեզմանոցի ճանապարհը, գիտես Մա-յից և Ալ-
զանի քարայրերից սկսած:

Վանենոկը նայեց յեղբորը փայլփլող աչքե-
րով: Սահնակները դանդաղ եյին գնում: Նա լը-
սում եր և լռում. Հյուրի Վորդին ասում եր.

— Դու տեսար, թե ինչպես են ապրում այն
լակուանները, վորոնք հաց են շինում: Նրանք լավ
են ապրում: Միայն տամուզներն են, քաղցած գայ-
լերի նման, թափառում տայգայում: Յակուաներն
սկսել են ուրասի փոխարեն տաք յուրթեր շինել
ու ապրել առանց մեզ նման թափառելու: Յես
առաջնորդեցի ուսս զինվորներին, ցույց տալով
նրանց տայգայի միջով այն ճանապարհը, վոր
տանում եր դեպի թշնամիները, ու այն ժամա-
նակ յես շատ բան սովորեցի:

Հյուրի Վորդին տխրությամբ լռեց: Նրանք
դուրս եյին գալիս ձյունի հարթությունը: Լեռ-
ների լանջերը թաղվում եյին սպիտակ հանգըս-
տության մեջ, և վերջին տայգաների մութ շեր-
տը շատ յետ եր մնացել: Քամին խփում եր նը-
րանց սառցով ապակեպատ թիկունքներին և յետ
եր թռչում, չթափանցելով շորի մեջը:

Հյուրի Վորդին կկոցեց աչքերը, ձյունի մեջ
դազանի հետք փնտռելով: Իրիկնամութը դանդա-

դում եր և առաջ եր շարժվում առանց սովեր-
ների, ինչպես սպիտակ գիշերների առաջին ուր-
վականներ:

Սրականջ շները, վոր ծուլությամբ յետևից
եյին գնում, հանկարծ սկսեցին, ականջներն զգու-
շությամբ շարժելով, առաջ նետվել:

Հյուրի Վորդին ծոր տալով սուլեց: Շները
ցնցվեցին և թռան ձյունե հարթության վրայով,
փափուկ ձյունի մեջ փոսեր փորելով:

Նրանք չկարողացան հեռու գնալ. վոռնացին
սուլոցի նման անհանգիստ և զգուշ վոռնոցով:
Հյուրի Վորդին գնաց դեպի նրանց: Վանհնուկը
հաղիվ եր հասնում յեղբոր յետևից: Շները այ-
ծյամների (ЛОСЬ) հետքն եյին ընկել:

Հյուրի վորդին նայեց հետքերը, ասաց ցած-
րաձայն.

— Վորսը մոտիկ ե: Գնանք առանց շտա-
պելու: Իրիկնամթին մենք այնքան կմոտենանք,
վոր կարող ես դնլ յել սպանել:

Բաղարանները տունդրաներ եյին դառնում:
Սյնտեղից ջերմություն եր փչում: Իրիկնամթի
ապակե թափանցկականությունը մարեց: Իրիկվա
կապույտ սովերներ եյին ընկնում:

Հյուրի Վորդին ավելի արագ գնաց: Շները
կաչում եյին վորսորդներին: Գաղանը շատ մոտ
եր:

Արևը լեռների ձյունապատ կապույտ լանջերի
 յետևից գուրս սողաց խոնավ ամպերի տակից: Ջյու-
 նե հարթութեան վրա ծիրանագույն լույս սփռու-
 վեց: Այն ժամանակ թարմ արշախ պես վառ կարմիր
 ֆոնի վրա պարզ կերպով զծագրվեցին թփուտ-
 ների ծայրերը և նրանցից վեր պահապան այ-
 ծյամի ճյուղավոր յեղջյուրների ամուր վոստերը:

Հյուրի Վորդին լուռ պառկեց ձյունի վրա:
 Ծներն իջեցրին ականջները: Վանենոկը վոռքի
 սահնակները հանեց: Այն ժամանակ Հյուրի Վոր-
 դին, նրան ուղեկցելով, հրացանը նրան տվեց,
 ուղեկցեց մինչև թփուտը ու կամաց հրեց թի-
 կունքին: Վանենոկը մինչև գոտին պառկեց ձյու-
 նի մեջ և հրացանը գլխի վերևը բռնած առաջ
 սողաց, կարծես լողալիս լիներ:

Ծները շնչակտուր գնում եյին նրա յետե-
 վից, պահվելով փխրուն ձյունի մեջ:

Հյուրի Վորդին սնշարժ սպասում եր: Սա-
 ուրն ոգի մեջ լսվեց պայթյունը: Ծները կլանչեցին
 և փոթորկի նման հարձակվեցին առաջ: Թը-
 փերի յետևը, ալ յերկնքի վրա հանկարծ յեղջյուր-
 նեոի բազմաճյուղ անտառ բուսավ, հետո կայծկըլ-
 տացող ձյունի բորան բարձրացավ: Հոտն անհե-
 տացավ ձյունե փոշու մեջ իրիկնադեմի սպիտակ
 տափաստանում:

Վանենոկն աղաղակեց.

— Խփել եմ:

Հյուրի Վորդին գնաց դեպի աղաղակը: Շը-
ները վնդստում եյին սպանվածի շուրջը:

Հյուրի Վորդին դանդաղ յետ արեց դանակը
գոտուց և սկսեց քերթել: Վանենուկը փնջացնելով
և իր աչքերի նեղ անցքերը փայլատակեցնելով
ոգնում եր նրան:

Հյուրի Վորդին առաջին կտորը նրան տվեց,
և Վանենուկն ուտում եր դանդաղ, նայելով գա-
զանի արյունից ձյունի վրա առաջացած սև վեր-
քերին:

— Դու հաջող սկսեցիր, Որուլգան լեռների
փոքրիկ յեղջերու, հպարտությամբ ասաց Հյուրի
Վորդին:— Բայց շտապիր տուն, վոր մինչև առա-
վոտ ուրասը, յեղջերուները վերցնեք և մեր ծը-
նողների հետ այստեղ լինեք: Մենք քո վորսով
շներին ել կկերակրենք, վորպեսզի մեզ ավելի
քիչ մնա, վորովհետև արևը դուրս յեկավ թե չե,
մենք առաջ կգնանք, իսկ կուշտ յակուտները
չեն շարժվում տեղներիցը: Գնա:

Վանենուկը դահուկները կապեց, շվացրեց
շանն ու գնաց:

Հյուրի Վորդին զազանի մորթին փռեց ձյու-
նի վրա, լացող, սրականջ, պառավ շանը թողեց
սառչող լեշի մոտ և պառկեց: Միայնակ մնացած
շունը Վանենուկի յետևից վոռնում եր ձյունե-
րնդարձակ տափաստանում:

Հյուրի Վորդին նայում եր ամպերի մեջ
առկայծող աստղերին, նրանցով հաշվում եր, թե
մինչև իր ճանապարհի վերջը քանի կայան ե
մնացել, ամպերը դիտելով մտածում եր զար-
նան մասին և լսում եր, թե ինչպես յերկրի
վրա դիշերը դադարում ե քամին ու գնում ե
յերկինք, ուր ծանր ամպերը շարժում ե ազ-
վամազի նման:

Շունը վնգստալուց հոգնած՝ լռեց: Այն ժա-
մանակ Հյուրի Վորդու հոգին աշխարհի հետ կա-
պող արտաքին շղթան կտրվեց: Նա փաթաթվեց
գազանի թարմ մորթու մեջ և քնեց:

Առավոտյան դեմ քամին նորից յերկիր ի-
ջալ:

Նա ամպերի միջից դուրս քշեց խոնավու-
թյունը և սառցե կայծերի նման ցած ընկան:

Այդ կայծերը սառցե տափաստանում փրո-
վեցին մշուշի նման, և մշուշի մեջ յերկար ժա-
մանակ չեր յերևում Վանենոկը:

Հյուրի Վորդին անհամբերությամբ նայում
եր հեռուն: Մտածելով՝ նա շանն ընդառաջ ու-
ղարկեց: Շունը գայլի դնչի նման դունչը քսեց
տիրոջ վտաքերին ու ըմբռնելով՝ հուզված ու
վնգստալով գնաց:

Հյուրի Վորդին յերկար սպասեց: Նա մտա-
ծում եր յորերի մասին և հախոյում:

Արդեն ճաշից հետո յեր, վոր ճյունն թուխ-
պի միջից դուրս լողացին շները, նրանց յեակից
յեղջերուններն ու սահնակը:

Այն ժամանակ Հյուրի Վորդին վարժ հայաց-
քով շրջահայելով սլացող գնացքը, տեսավ, վոր
հայրն այդ գնացքումը չե, և մայրն ու յեղբայրը
խուսափում են իր հայացքից, կարծես վախե-
նում են նրա գայրույթից:

Հյուրի Վորդին մի ճիչով կանգնեցրեց յեղ-
ջերուններին ու շներին: Վանենոկը գլուխ տվեց
նրան և աչքերը թագցնելով մոտ չեկավ նրան:

— Ո՛ւր ե հայրը,— հարցրեց Հյուրի Վոր-
դին,— յորերը ինչ թակարդի մեջ գցեցին հիվանդ
յեղջերուին:

— Նա գնաց Մա-այի հետքով,— սպասա-
խանեց Վանենոկը:

— Վճրատեղ եյին Մա-այի հետքերը, և
դուք ինչո՞ւ թողեցիք գազազած գայլին,— աղա-
պակեց Հյուրի Վորդին:

Մայրն առաջ անցավ:

— Մա-ան գիշերն ինձ համար նվերներ
եր բերել և թողել ուրասի շեմքում: Հայրդ այդ
բաները մանր կարտեց և հետքերով գնաց գըտ-
նելու վիրավորողին:

Հյուրի Վորդին գլուխը կախեց և ասաց խը-
լացած ձայնով.

— Մենք անցնում ենք այն յերկրով, ուր տամուզներն են ապրում: Թակարդներով շրջապատված դաշտերից դայլը դժվար կվերադառնա: Մենք կսպասենք մինչև յերրորդ արևը:

Մայրը դուռի ավեց վորդուն: Վանենոկն արձակեց յեղջերուներին: Շներն իրենց թաթերով սզնում եյին ձյունը մաքրելուն: Մինչև իրիկուն ուրասը կազմ-պատրաստ եր իր տեղում, ոջախում վառվում եյին ու պատվում կրակի լեզուները, ածուխների վրա հալվում եր նուրբ ճարպն ու խորովվում միսը:

Հյուրի վորդին լսում եր դադարող քամու հառաչանքներն ու, նայելով կրակին, ասում եր թախծալի.

— Յորերը Մա-այի հետքերով մահվան թակարդի մեջ են գրավում ծեր յակուտին: Նա գնաց մեռնելու իր սովորությունների համար: Մի՞թե այդպես չեն մեռել նաև այն ժանիքավոր գազանները, վորոնց ժանիքներն այժմ ամենալավ մորթուց թանգ են, և վորոնց մեռած կզգուն այժմ մենք Մամոնաների գերեզմանոց ենք ասում: Վիրավոր թաթով ծեր Մամոնաը— դա իմ հայրն և: Դու յես չես դառնա քո ուրասը: Մահը վրա կհասնի քեզ ճանապարհին, ինչպես վրա յե հասել նրանց, վորոնց յեղջյուր-

ներն ¹⁾ այժմ իմ ճանապարհորդութեան նպատակն են:

Հյուրի Վորդին գլուխը կախեց:

Նա իր յետևը մի հանգիստ չբիչբիոց լսեց և յետ նայեց: Մայրը սիրահոժար նրան տվեց ծխացող մսի մի կտոր: Հյուրի Վորդին վերցրեց և կերավ ու համակվեց կերակրի, կրակի տաքութեամբ և քնաբեր հանգստութեամբ:

IV. ՄԱՍՈՆՏՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՅԸ

Այդ տարին գարունը հանկարծ յեկավ:

Քամիներն ու ամպերն անսահման տաքութիւն բերեցին, ու ձյունը հոսեց—առվակներ, լճեր ու ճահիճներ դարձավ:

Տունդրայի մուգ-կեղտոտ մակերևույթը բացվեց: Նրա վրա, յեղջերուի մարմնի քոսերի նման վնջերով կանաչ խոտ բուսավ: Մոծակներն ու մեղունները բարձրանում էին գետնի վրա, ինչպես հանգչող կրակի ծուխը յակուտի յուրթի վրա:

Հյուրի Վորդին վեց արեգակ կանգ առավ ծովի ափին, սպասելով, Վոր ճանապարհ բացվի դեպի կղզին: Գիշերները սառուցը կանգ եր առ-

¹⁾ Յակուտները մամոնտի ժանիքներին չեղջյուրներ են ասում և չգիտեն, թե մամոնտի համար ինչ նշանակութիւն են ունեցել:

նում, բայց մի թեթև բուքից, վորը ջուր եր
քշում, քանդվում եր և ծովի վրա շինված սառ-
ցի ճանապարհը շուռ տալիս:

Հյուրի Վորդին սկանջ եր դնում յերկնքի
հանգստությանը, Հյուրի Վորդին դիտում եր
աստղերը և յեղջերուներին ուրասին մոտ եր
պահում: Շներն անհանդիստ վռնում եյին: Գի-
շերները վերևում լսվում եր կղզին թռչող կա-
րասների թևերի թափահարումը:

Հյուրի Վորդին, ձեռքեղը կրծքին ծալած,
սպասում եր:

Հինգերորդ որվա գիշերը պահակ յեղող
այծյամը ճյուղավոր հոտը սառցի վրայով անց-
կացրեց կղզին: Հյուրի Վորդին ցնցվեց, նայեց
աստղերին, սկանջ դրեց ոգի հանգստությանը
և տեղից չշարժվեց:

— Յորերն ինձ հոտի յետևից չեն տանիլ,
մտածեց նա ծիծաղելով, ու հպարտացավ, յերբ
լսեց սառցի ճայթյունը.— Հյուրի Վորդին յորե-
րից խորամանկ ե:

Սպիտակ գիշերը ալիքավոր լույս սփռեց
ապակիացած ծովի վրա: Սպիտակ գիշերով հեռ-
վում յերևում եր սառուցների միջով անցնող
վորսերի հոտի կտոր ստվերը: Նրանց ստվերը
փախչում եր սպիտակ տարածության վրա անց-
նող ամպի ստվերի արագությամբ: Հյուրի Վոր-

դու կկոցած աչքերը հեռուն եյին տեսնում: Ու նրա աչքերի սև հայելու մեջ փայլատակեց հաղթանակը, յերբ սառցե ճանապարհը ջրի հոսանքին չդիմանալով՝ վորոտաց, կործանվեց, ու հոտի ստվերն անհետացավ ալիքների ու սառցի կույտերի մեջ:

Բայց վեցերորդ որվա գիշերը Հյուրի Վորդին յեղջերուները լծեց սահնակին, շվվացրեց շներին, ուրասի պատերը դարսեց սահնակի վրա, աղաղակեց Վանենոկին ու մորը.— «Իչուգէյ, բարդա», և յեղջերուներին քշեց սառցի վրայով:

Շները, յեղջերուներն ու մարդիկ գիտեյին, վոր սառցե կամուրջը հաստատուն չէ:

Առանց ստվերների սպիտակ գիշերը իր հազիվ առկայծող գունատ աստղերով նույնպիսի խորհրդավոր ու խորամանկ ժպտով տանջում եր նրանց, ինչպես ծովն ու սառույցը:

Յեղջերուներին քշելու կարիք չկար: Նրանք սլանում եյին քամու արագությամբ, շներն ել՝ նրանց կողքից՝ վազքից խեղդվելով:

Յերբեմն Հյուրի Վորդու սիրտը տրոփում ու մարում եր ինչպես վերավոր այծյամի սիրտը. նա յեղջերուի վտաքերի տակ ճայթյուն եր լսում: Յերբեմն յետեից Վանենոկն եր ճչում. նա իր յետեից սառցի վորոտ եր լսում:

Բայց յեղջերուները գնում եյին հարթ, սպի-

տակ զիշերը նրանց վազքի քամու առջև բաց-
վում եր, սառցե ճանապարհը տարածվում եր
անծայր ժապավենի նման, իսկ զիմացից—զի-
շերվա միջից դուրս ելին ցցվում կղզու նույն-
պես սպիտակ ահագին ժայռերը:

Հյուրի Վորդին աղաղակեց.

— Գետինն եւ Յորերը չեն խաբել նը-
րան, ով վազրին շան նման խեղդեց:

Յեղջերուններն ընդունեցին—հասկացան սյգ
աղաղակը. քամին ավելի խիստ եր խփում ճա-
նապարհորդների յերեսին:

Այն ժամանակ հեռվից, ինչպես դարնան
վորոտ, նրանց ականջին հասավ քնքուշ, խուլ
մրմնջուտ: Շները կլանչեցին: Հյուրի Վորդին քը-
շեց յեղջերուններին: Վորոտը հասնում եր, գա-
լիս հեռվից:

Մայրն աղաղակեց.

— Յերկնքում շատ աստվածներ կան, բայց
ամենից մեծը ծեր Նիկոլան եւ Թոզ նա ոգնե
մեզ:

Հյուրի Վորդին ծիծաղեց: Հեռվում քանդ-
վող ճանապարհի դղրդոցը հասնում եր նրան,
բայց առաջից դեպի նա ելին գալիս կղզու մա-
ռախլապատ հսկայակուտերը, և առավոտայան
ցրտից սառուցն ամրանում եր նրա շուրջը:

— Յորերը չեն հասնի մեզ,—աղաղակեց

չուրի Վորդին, վախեցնելով յեղջերուններին, — ու յորերը թեկուզ տրաքեն, սառցի տակ ջուր լցնելով, չեն քանդի մեր ճանապարհը:

Յեղջերունները ծանր եյին շնչում, նրանց խոխոտցը խլացնում եր ովկիանոսի բարձրացող կրծքի վորոտը: Վտանգը նրանց առաջ եր քըշում: Նրանք քամու արագությամբ ափ դուրս յեկան ու կանգ առան յակուտի կանչից: Այն ժամանակ նրանք՝ հասկանալով, վոր ճանապարհի վերջն ե, սկսեցին դանդաղ ծունկ չոքել, խոխոտցից խեղդվելով:

Հյուրի Վորդին յետ նայեց: Սառցե սարերը բարձրանում եյին ալիքների նման, դղրդում եյին թնդացնելով ողը և գիշերային աղջամուղջի թափանցկությունը հագեցնելով մառախուղով: Հյուրի Վորդին կանգ առավ մինչև լուսաբաց — ձեռքերը հանգիստ կրծքին ծալած: Առավոտը սառցե ծածկոցը փլվեց:

Այն ժամանակ կղզուց վեր թռան հառաչող որորները և իջան սառուցների միջի ալիքների վրա: Հյուրի Վորդին հրամայեց ափին ուրասը շինել, իսկ ինքը գնաց կղզու խորքը:

Նարնջագույն արևը սառցե ժայռերի յետևից դուրս սողալով, բարձրանում եր նրա գիմացը և ցրում առավոտյան մշուշը:

Սրականջ շներն ուղեկցում եյին Հյուրի

Վորդուն, ամեն կողմից թռչուններ թռցնելով՝ նրանք հաջում եյին բների վրա, և Հյուրի Վորդին նրանց հետ միասին ընտրում եր ձվաները և խմում:

Իճի հայելանման ջրից վարդագուշն մշուշի միջով վեր եյին բարձրանում կարապները ու ծանր իջնում խիտ թփուտներում: Հյուրի Վորդին կանչեց շներին և գնաց ուղիղ դեպի արևը, բնակուլթյան և մարդու հետք փնտռելով:

Կեսորին նա նորից դուրս յեկավ ծովափ և մտախոհ կանգ առավ: Բհեր փնտռող շները հանկարծ հաջոցով ու կլանչոցով նետվեցին ինչ-վոր մեկի հետքի վրա: Բայց հաջոցն ուրախ եր ու հնչուն. նրանք մի այնպիսի բան գտան, վոր Հյուրի Վորդին ստիպված եր զարմանքով իր մոտ կանչել պառավ շանը: Շունն ատամներով պատռտում եր նրա շորերը և կանչում եր իր յետևից:

Հյուրի Վորդին բարձրացավ նրա յետևից և դուրս յեկավ մի գետի մոտ: Պառավ զամփռը նետվեց դեպի ափը և վճռականորեն լողալով անցավ վտակը: Նրան հետևեցին մյուս շները. նրանք են ափին ել նույն ուրախ հաջոցով ու կլանչոցով առաջ նետվեցին, կանչելով իրենց տիրոջը: Հյուրի Վորդին սպառնացող սուլոցով իր մոտ եր կանչում նրանց, բայց շները հնա-

զանդությամբ պոչները հուպ տալով՝ յետեչին
զնում, այլ սպասում եյին ավին:

Սառցաջրից արվելով՝ Հյուրի Վորդին լո-
ղաց մյուս ավի: Ծները լիզեցին նրա դողացող
մարմինը, չթողեցին վոր հագնվի, այլ տարան
իրենց յետևից: Հյուրի Վորդին շտապ տաքացավ.
նա հագիվ եր հասնում շների յետևից: Ծները գնում
եյին ավի ուղղությամբ ուրախ, հաստատուն, ճա-
նապարհը չեյին կորցնում և հետք չեյին փնտռում:

— Հետքերը շատ թարմ են.— մտածեց
Հյուրի Վորդին:

Նա մոտ կանչեց պառավ շանը և շոյեց
նրա վիզը: Ծունն ուրախ կլանչեց, բայց չպա-
տասխանեց Հյուրի Վորդու հարցին: Նա միայն
ավելի ուրախ առաջ գնաց, ականջներն ուրախ
շարժելով:

— Նա գիտե, թե ինչ ե փնտռում և ուր
ե տանում, — մտածեց Հյուրի Վորդին և առանց
մտածելու գնաց:

Նա շների բնագղին ավելի յեր հավատում,
քան ինքն իրեն:

Իրիկնադեմին գետը նրանց հանեց լճի ա-
փը: Հյուրի Վորդին իր առջևը, ձորի գլխին կա-
պույտ ծուխ տեսավ: Իա ոջախի ծուխն եր,
բայց Հյուրի Վորդին վորսորդի զգուշությամբ
կանչեց շներին և ստիպեց լուրթյամբ գնալ:

Նա ինքը առաջ շարժվեց, դիտելով իր շուրջը:

Դեպի ձորը տանող լանջին նա կանգ առավ: Ձորի հատակում, ուր թարմ մամուռ եր բուսել, նա տեսավ արածող յեղջերուների և մի յուրթ, վորից ծուխ եր բարձրանում:

Յուրթը գտնվում եր ուղիղ ձորի հատակում: Նրա հողե պատերը թարմ եյին, և ճյուղերից հյուսած խողովակը մրից ու ծխից դեռ չեր սեփացել:

Շներն առաջ եյին թռչում, և Հյուրի Վորդին միայն ուժով եր իր մոտ պահում:

Յուրթի մոտ մարդ չեր յերևում: Հյուրի Վորդին մտածելով սկսեց գգուշությամբ իջնել շավղով: Շավիղը լավ տրորված եր. շներն այդ շավղով գնում եյին անհամբեր փոստոցով:

Հյուրի Վորդին համարձակ ցած իջավ: Շրները չլսեցին և դռան առջևը հաջեցին: Այն ժամանակ Հյուրի Վորդին գլուխը կռացրեց և մըտավ յուրթը:

Պատուհաններին ապակիների տեղ գցած յեզան փամփուշտները դեռ բավականաչափ լույս եյին ներս թողնում, վոր Հյուրի Վորդու յերեսին ընկնելով՝ յուրթի մթության մեջ կարելի յեր վորոշել նրա դիմագծերը: Բայց ոջախի պատերը լիզող բոցի պայծառ լեզուներն ել բավական

եյին, վորպեսզի Հյուրի Վորդին ճանաչեր Մա-
այի՝ կրակի վրա թեքված բրոնզագուլն դեմքը:
Նա տեսավ յեղբորը և դեմքը ծածկեց ձեռ-
քերով:

— Ո՞ւմից ես վախենում,—ասաց Հյուրի
Վորդին, մոտենալով նրան և ձեռքերը վերցնե-
լով դեմքից,—մի՞թե յես քո յերազի ստվերն եմ:
Մա-ան ծունկ չոքեց:

— Դու յեկեղ ես ինձ կամ մարդուս սպա-
նելո՞ւ:

Հյուրի Վորդին թեթև կերպով բարձրաց-
րեց նրան:

— Յես չեմ ապրում այն ձմեռները, յերբ մա-
մոնտները թափառում եյին այս կղզում և չգի-
տեյին, վոր սա իրենց գերեզմանոցը պիտի դառ-
նա: Յես ինչո՞ւ պետք է կատարեմ նրանց որենքը,
վորոնց կյանքը հանգչում է քո ոջախի բոցեղեն
լեզուների նման, քանի վոր դու այժմ փայտ
չես դնում կրակիդ:

Մա-ան նայում եր նրան ու չեր հասկա-
նում: Հյուրի Վորդին նայեց շուրջը: Յեզան
փամփուշտների միջով մութն արագ ներս եր
սողոսկում, բայց յակուտի սուր աչքերի համար
այնքան լույս կար, վոր նա դատարկ յուրթում
տեսավ այնտեղ յեղած ուռօի հետքը:

Նա կարճ հարցրեց.

— Ո՞ւր ե քո մարդը, և քո ընակարանում
ինչո՞ւ ուուսի շոր եմ տեսնում:

Այն ժամանակ Մա-ան խոսեց արագ,
կարծես քամին եր ոգնում նրա շրթունքներին
այդպես շոտալ շարժվելու:

— Յերբ մեր շները բերեցին իմ հոր շորի
կտորները, և մենք գտանք նրա դիակը, վորին
կրծոտել եյին գայլերը մեր հետքով գալիս...

Հյուրի Վորդին գլուխը կախեց: Մա-ան
վեր բարձրացրեց ձեռքերը, և ոջախի լույսում
նրանք յերևացին ինչպես վախեցած կարապ-
ների վարգազույն պարանոցները: Հյուրի Վոր-
դին կամաց արտասանեց.

— Սոսիբ: Յես հիվանդ յեղջերուի մահվան
մասին չգիտեյի, նրա, վորին հիմար որենքը
մահվան ծուղակի մեջ քշեց: Բայց յես տեսա
այդ կրակի բոցերի մեջ: Սոսիբ:

— Այն ժամանակ, — շարունակեց Մա-ան, —
այն ժամանակ յես ասացի մարդուս, վոր պետք
ե փախչել, և նա համաձայնեց ինձ հետ: Մենք
յեկանք այստեղ, վորովհետև մենք կարծում
եյինք, թե դու դուրս չես գալ տունգուաների
գաշտերից, մինչև վոր վրեժ չառնես, ինչպես
որենքն ե հրամայում: Մենք գետով իջանք մին-
չև գետաբերանը ու դեպի Յեզների հրվանդանը
տանող նրա վտակն իվեր անցանք այն նավակնե-

րով, վորոնք գալիս ելին այստեղ մամոնտի ժանիքներ տանելու: Իմ մարդը Լենա գետի ջրի մոեն մի կաթիլը ճանաչում ե ու նա առագաստովոր նավակներով բերեց նրանց, ու մենք այժմ բարձում ենք մամոնտի ժանիքներով:

— Դու լավ ասացիր,— նկատեց Հյուրի Վորդին,— բայց քո յուրթի ուսնն ո՞վ ե:

Մա-ան ծիծաղեց. ծիծաղից նրա աչքերը ցոլացին:

— Ռուսը,— դա մի մարդ ե, վոր աչքերին ապակիներ ունի: Նա ժանիքներ չի հավաքում, թողնելով, վոր մենք փոխանակենք ապրանքի հետ: Բայց նա ման ե գալիս կղզում և յերբեմն ստիպում ե մեզ բոլորիս փորել գետինը և կտորրտել ժայռերը:

Հյուրի Վորդին նայեց պատուհանին:

— Գիշերը կերկարացնի իմ ճանապարհը, յես պետք ե շտապեմ: Յես յեկել եմ այստեղ մամոնտի վոսկրներ ձեռք բերելու, վորովհետև այստեղ նրանց գերեզմանոցն ե, ու յերբ բավականաչափ կհավաքեմ, կգամ այստեղ վաճառականների ապրանքներին նայելու, վորպեսզի փոխանակեմ: Մնաս բարև:

Մա-ան ձեռքը մեկնեց և աղաղակեց.

— Դու ինձ չսպանեցիր, Անդրեյ, և մար-

դուս ել չես սպառնում սպանել: Բայց միթե չես ուզում այս յուրթում հյուր մնալ:

Հյուրի Վորդին գլուխը շարժեց.

— Մարդկանց ճանապարհը տարբեր է, վորովհետև արժիվը ճախրում է ոգում, իսկ վարազը հոգն է քանդում: Բայց մենք ելի կպատահենք միմյանց՝ նսովակները տանող շավղի վրա: Մնաս բարև և մի մտածիր հիմար որենքների մասին այն յակուտների, վորոնց վոսկրները վաղուց կրժոտել են քաղցած գայլերը:

Նա շուռ յեկավ ու դուրս յեկավ: Մա-ան ուղեկցեց նրան մինչև դուռը: Շները փաթաթվեցին նրա վոտքերին: Բայց Հյուրի Վորդին հատու սուլոցով նրանց առաջ ուղարկեց, ու նրանք գնացին, հնազանդությամբ պոչները հուպ տալով և ականջները սրած:

Գիշերը Հյուրի Վորդին վերադարձավ ափը: Ուրասը պատրաստ էր, յեղջերուները թարմ մամուռ ելին վորոճում և ոջախի լույսը պլտուլյա-պտուլյա էր անում ուրասից վեր՝ զէշերվա պայծառ թափանցկության սովերները խառնելով:

V. ԱՊԱԿԻՆ ԱԶՔԵՐԻՆ ՄԱՐԴԸ

Վարդագուշն մշուշի մեջ Մամոնաների գերեզմանոցում շատ նարնջագուշն արևներ դուրս յեկան և մայր մտան ովկիանոսի սառցե ժայռի

յետևը մանիշակագուլն հեռվում: Հազարամյա սառուցները տեղի եյին տալիս վառ արևի և սպիտակ գիշերների տաքությանը: Կղզու լճերը փրփրադեզ առվակներով ջրի վտակներ եյին թափում ովկիանոսը: Նրանց ափերի խիտ թբփուտներում յերկարավիզ կարապները ճուտեր եյին հանում: Գորշ-կարմրավուն ձորակներում ծաղկեց յեղջերուի մամուռը:

Կղզու յետևը ծովը մաքրվեց սառցից, և առագաստավոր նավակներն զգուշությամբ մոտեցան ափին. նավակներում մարդիկ ապրանք եյին բերում փոխանակության համար: Ովկիանոսի բաց մանիշակագուլն հեռվում սառցե ժայռերը վերջալուսի ժամանակ զոծվում եյին արեգակի ճառագայթներով, կարծես թե արևը նրանց յետևն եր մտնում, վորպեսզի յերկու ժամ հետո կրկին ճախրելով վեր բարձրանա կղզու վրա:

Հյուրի Վորդին անցավ կղզու յերեք-քառորդ մասը և հյուսիսում դուրս յեկավ ովկիանոսի կողմի ընդարձակ հարթությունը: Ուրասի, յեղջերուների, շների և այլ ունեցվածքի հետ նա, ծեր յակուտի ատամների նման դեղին, վեց գուլգ մամոնտի ժանիքներ ել բերեց այս նոր կայանը: Հյուրի Վորդին պատեց կղզու լճերի, գետակների ու առուների շուրջը, վորոնք իրենց

ափերը բաց եյին արել՝ վորսը հեշտ գտնելու։
Յերբեմն յեղջյուրի նման կեռ և յերկու մարդի
հասակի մի ժանիք գտնելով՝ նա սուզվում եր
սրբնթաց գետի սառը հոսանքի կամ լճի կանդ-
նած ջրի մեջ՝ փնտռելու նրա զույգը։

Հյուրի Վորդու հետ թափառում եյին և
շները։ Անխմանալի, չտեսած կենդանիների վոս-
կրրները փնտռելիս, պառավ ու խելոք շունը,
տանջվելով ուժի պակասությունից, սովորում եր
մեռածների վորսը։ Յերբեմն նա զույգ ժանիք-
ների հետքը գտնում եր ու են ժամանակ նա
վոռնում ու այս-այն կողմն եր ընկնում, ուրա-
խանալով իր ըմբռնողության, հասկացողության
վրա։ Յերբեմն նա վշտով հետևում եր իր տի-
րոջը և խուլ վռնչում, յերբ Հյուրի Վորդին
սուզվում եր լճի հատակը և նորից հայտնվում
եր դատարկ ձեռքերով։

Ովկիանոսի ափերի ուղղաձիգ լանջերը
վայրենի և անպտուղ եյին։ Ովկիանոսի ալիքնե-
րը տաշում եյին նրան և ջրից ուռած սառցե
ժայռերը, վորոնց վողողում եյին ալիքները,
մթնագույն ափերի վրա թարմ վերքի հետքեր
եյին թողնում։ Ափերից սողացող առվակները
լվանում եյին հողի կավե մարմնի խոր վերքերը,
վոր դարերով սառել, պողպատի ամրություն եր
ստացել։

Հյուրի Վորդին կանգ առավ ափին: Նա համարեց վեց զույգ մամոնտի ժանիքները և սկսեց հաշվել Վանենոկի ձեռք բերած աչքի լույս մորթիները: Յերկար, պինդ վոսկրները, վորոնց մի մարդ հազիվ կարող էր բարձրացնել, ընկած ելին ուրասի առջևը, և ծեր շունը չէր հեռանում նրանցից: Վանենոկը արհամարհանքով էր նայում դրանց: Մորթիների հաշվելը վերջացնելով, Հյուրի Վորդին ասաց նրան.

— Ռուսները գիտեն իրերի արժեքը, իսկ յակուտը կապույտ աղվեսի յերեք մորթի կտաս մի պղնձե թեյամանի, վորովհետև դա նրան պետք է: Ռուսը հավաքում է մորթիները, վոր իրեն հարկավոր չէ, ու նա ամեն մի կապույտ մորթու համար ստանում է յերեք անգամ տասը պղնձե թեյաման: Ռուսները խորամանկ են, բայց յակուտի խելքն էլ վոչվոք չի առել:

Հյուրի Վորդին խոր շունչ քաշեց և ավելացրեց.

— Թող մայրը ոջախում կրակ վառի: Մենք պետք է շտապենք, վորովհետև սառուցները ջրի տակն անցան, կնշանակի ձմեռը հեռու չէ: Իսկ մենք դեռ գերեզմանոցի յերեք քառորդն էլ չենք անցել:

Վանենոկը գնաց: Այն ժամանակ յերեկոյան մթան մեջ լսվեց ծոր տվող, շան կանչող մի վոռ-

նոց, և պառաւով շունը, ականջները սրելով, պատասխանեց նույնպիսի անհանգիստ վոռնոցով: Հյուրի Վորդին իր թոքերի ամբողջ ուժով կանչեց շներին, ու թափանցիկ գիշերվա խաղաղությունը վրդովող այդ հատու սուլոցով շներն իսկույն վերադարձան:

Հյուրի Վորդին փաղաքշեց նրանց, բայց նրանք դուրս ելին թուշում: Սպիտակ գիշերը պայծառ ստվերներ եր հագցնում հեռուները, և ամեն կողմից մշուշ եր բարձրանում: Հյուրի Վորդին մոտ կանչեց ծեր շանը, վոր մյուս շների հետ հոտոտում եր ողը, վերցրեց հրացանը, լոմին փոխարինող փայտե ձողը և բահը ու գնաց մեռած վոսկրների վորսի:

Շներն սպասում եյին նրան, և անհամբերությամբ շուրջը նայելով առաջ տարան նրան: Հյուրի Վորդին նրանց հետ իջավ ձորի հատակը, վորին հոտող առվակը լվացել եր: Նրա լանջին, գիշերվա մթության մեջ մեկը խռոացնելով ու հաջելով ինչ-վոր բան եր շինում: Հյուրի Վորդին ճանաչեց, վոր դա իր շներից մեկն ե, և մոտեցավ նրան: Շունը միքիչ հալված հողի տակից մսի ու կաշվի կտորներ եր ձգում: Նա դռացնում եր ու հեթում. Հյուրի Վորդին չեր կարողանում նրան հեռացնել իր վորսից: Հաջելով ու կլանչոցով շունն իգուր եր աշխատում գետնից դուրս քաշել իր գտածը:

Հյուրի Վորդին կռացավ ու սկսեց նայել: Կաշվի պատուած կտորների տակ յերևում էր մուխ-կարմիր միս: Նա քարի պես պինդ էր, բայց շան ատամների տակ քաղցրավենու նման յերկար մազաթելեր էր դառնում:

Հյուրի Վորդին կանգնեց վարմացած և յետ կանչեց շներին: Նրանք պատրաստ կանգնած էին, բայց հպատակվելով մարդու կամքին, մոտ չեյին գալիս հողին ու մսին:

Հյուրի Վորդին վերցրեց սուր ձողը և սկսեց փորել հողը: Վերևի հալված հողը հեշտ էր վեր կենում, բայց հալվածի տակի սառած շերտը պետք է սառուցի նման մանր կտորներով ջարդել: Հյուրի Վորդին քանդում, հանում էր և նրա հետ վերցնում էր նաև յերկար գորշ կաշին, վորի տակը կարմիր էր և ինքը ծածկված էր սև մազերով:

Հյուրի Վորդին փորում էր վորսորդի ազահուխյամբ և շտապողականությամբ, լուռ էր, յերբեմն աղաղակում էր դեպի գետնի մեջ թաղված կենդանին վրա պրծնող շների վրա:

Հեռվում կապտին սվող ովկիանոսի սառցե ժայռի յետևից նեղ ծայրով յերևաց արեգակը, և նրա լույսը թափ անցավ ժայռը: Առավոտյան լույսն անցնում էր ովկիանոսի վրայով ամպի ըստվերի արագությամբ: Այն ժամանակ, առավոտվա

լուսով, Հյոււրի Վորդին տեսավ, վոր դա մի վիթ-
խարի կենդանու վոտք ե, վոր յերևում ե գետ-
նի միջից: Հյոււրի Վորդին հողի շերտը մի մար-
դու հասակի չափ վերցրեց, ու նրա տակը միայն
կենդանու այդ վոտքն եր: Նա իր գյոււտից վա-
խով յետ քաշվեց:

Շները վայրկենապես հարձակվեցին և իրենց
ատամները խրեցին հողի, կաշվի ու մսի մեջ:
Յերը Հյոււրի Վորդին յետ կանչեց նրանց, տե-
սավ, վոր նրանք շրթունքները լիզելով միս են
ուտում:

«Յեթե սա այն կենդանին ե, վորի յեղջյուր-
ները իմ վորսի նսպատակն են կազմում,—մտածեց
Հյոււրի Վորդին,—ապա իզուր չե, վոր յես ժամա-
նակ եմ կորցնում հանելու համար»:

Նախքան աշխատանքն սկսելը նա յերկար
ժամանակ մտածում եր: Նա հինգ քայլ արավ,
կենդանու վոտք հիշեցնող բանից դեպի վեր, հե-
տո անկյուն կազմեց, գետնի միջով փնտռելով
գլխի տեղը, վորի վրա պետք ե ժանիքներ լի-
նեն: Նա վեց քայլ զնաց, վերցրեց հողի հալված
շերտը և նրա տակ տեսավ նույն սև մազերն ու
շեկ կաշվի աստառը:

Հյոււրի Վորդին յերկու քայլ ավելացրեց ու
փորելով տեսավ ձիու բաշի նման մազեր: Նա
սկսեց փորել ամեն մի քայլից հետո և միայն

տասներկու քայլից հետո դտավ, վոր կենդանու մարմինը վերջացավ: Այն ժամանակ վորսորդի ազահուլթյամբ, հոգնածուլթյուն չզգալով, նա իր ձողով սկսեց խփել քարացած գետնին և վերջապես տեսավ իրեն ծանոթ ժանիքի դեղին, վուկրի մարմինը:

Նա նստեց հանգստանալու: Հանկարծ նրա գլխում մի միտք ծագեց: Այդ միտքն ստիպեց նրան վտարի կանգնել: Հյուրի Վորդին կանչեց շներին և այդ դյուտի տեղից տանելով նրանց, ուրախ ասաց.

— Դեպի տուն:

Շները տհաճուլթյամբ եյին գնում: Հյուրի Վորդին համարեց նրանց և յերբ համոզվեց, վոր վոչ մեկը չմնաց մեռած կենդանու մոտ, տուն վերադարձավ: Վանենոկը դուրս յեկավ դիմավորելու նրան, և Հյուրի Վորդին ասաց հրամայողաբար.

— Վերցրու ծեր շանը, գնա կղզու խորքը, բայց այնպես, վոր արեգակը տաքացնի թիկունքը: Մեծ առվակի մոտ դու կգտնես իմ հետքը: Իմ այդ հետքով գնա, ու նա կտանի քեզ մարդկանց յուրթի մոտ, վորոնք մամոնտի յեղջյուրներ են փնտռում: Թո՛ղ նրանք գան այստեղ, վորովհետև յես մի բան եմ գտել, վոր ավելի արժեքան տասը զույգ յեղջյուր: Յես մի ամբողջ մամոնտ եմ գտել:

Հյուրի Վորդին ծիծաղեց:

— Նրանք, ովքեր այնպես թանգ են վճարում մենակ յեղջյուրների համար, ամբողջ դազանի համար շատ կվճարեն, այն դազանի, վորին վոչվոք կենդանի չի տեսել, իսկ մեռած՝ յես առաջինն եմ գտել: Գնա: Յես կպահպանեմ գտածս և կհանեմ վաճառականների համար:

Վանենոկը վերցրեց ծեր շանն ու գնաց: Հյուրի Վորդին սպասեց նրան մինչև ուշ գիշեր: Վանենոկը վերադարձավ միայն հաջորդ որվա առավոտը: Նրա հետ յեկավ ակնոցավոր մարդը, վոր մի նիհար, բարձրահասակ մարդ էր. նա սեղմեց Հյուրի Վորդու ձեռքը և յակուտերեն բարեամիկ նրան:

Հյուրի Վորդին նրան ուրասը տարավ: Հյուրի Վորդին կերակրեց նրան թռչունի ձվաներով, յեղջերոի մսով, ու յերբ կշտացավ նա, հպարտութամբ ասաց.

— Յես ուղարկեցի ասելու, վոր յես մամոնա եմ գտել:

Ակնոցավոր մարդը գլխով արավ:

— Այո, յես գիտեյի, վոր մենք այստեղ մամոնա կգտնենք, յես գիտեյի: Յես յեկել եմ տեսնեմ այն:

Հյուրի Վորդին կանգնեց և ասաց ժպտալով.

— Դու ի՞նչպես կարող եյիր իմանալ այդ Միթե քո աչքի ապակիները թույլ են տալիս, վոր դու գետնի մեջն ել տեսնես:

Այդ մարդը նայեց Հյուրի Վորդուն և՛ ակնոցների վերևով, և՛ ակնոցների միջով: Հետո նա յերեխայի նման ուրախ ծիծաղեց:

— Ի՞նչ լավ ասացիր դու: Ով շատ ե սովորում ու գրքեր կարդում, շուտ ե կորցնում տեսողությունը: Գիտություն հավաքելով, յես կորցրի տեսողությունս և սկսեցի ակնոցներ կրել: Ուրեմն դու ճիշտ ես ասում, թե իմ ակնոցներն են արել, վոր յես գիտեմ այն մասին, թե յերբեմն ինչ կարող ե գտնվել գետնի մեջ:

Հյուրի Վորդին գլուխը կախեց, հետո ցածրաձայն հարցրեց.

— Ե՛, ի՞նչ են առաջարկում քո վաճառականները այն կենդանու ղիակի համար, վոր տասներկու քայլ յերկարություն ունի:

— Վո՛չինչ.— ասաց ակնոցավոր մարդը, վաճառականներին սառած միսը պետք չե, իսկ յես վաճառական չեմ: Բայց յեթե դու ինձ տաս կենդանին, ոգնես ինձ փորել, հանել այն և բարձել այն նավին, վոր կգա այս ափի մոտ, ապա յես քեզ համար շատ բան կանեմ, վորովհետև մենք կենդանու ղիակը կտանենք այնտեղ, ուր գիտեն նրա գինը: Դու ի՞նչ ես ուզում:

— Ռուսական վառարանով մի ռուսական խրճիթ, Ալբանում մի կտոր հող և մի մեքենա, վոր հաց և շինում:

— Յես այդ կանեմ քեզ համար,— ծիծաղեց ակնոցով մարդը,— վորովհետև Յակուտսկում մի հանձնաժողով կա, վոր այդ ամենն անում է յակուտների համար, վորպեսզի նրանց ռուսների ձեով ապրել սովորեցնի. ու յես քո և քո ընտանիքի համար ավելի կանեմ, քան թե դու յես խնդրում:

Հյուրի Վորդին վեր կացավ:

Այն ժամանակ զնանք: Արի և վերցրու նրան, վորի դերեզմանոցն է կոչվում այս կղզին:

Ակնոցավոր մարդը ձեռքը մեկնեց, և Հյուրի Վորդին սեղմեց այն: Ոջախում պրպտող ու հանգչող բոցի կարմիր լեզուները փայլեցին հյուրի աչքերի ապակիներին ընկնելով, և այդ աչքերը Հյուրի Վորդուն թվացին իսկապես գետնի միջով ներսը տեսնող աչքեր:

Նրանք միասին դուրս յեկան, և շները կապները ձգելով վռնեում ելին: Հյուրի Վորդին չբերցրեց շներին, ու յերբ նրանց վռնոցն ել լսելի չեր, ակնոցավոր մարդն սկսեց հարցուփորձ անել.— արդյոք սև՞ է մամոնաի մորթին, կարմիր է կաշվի տակը, մեծ են արդյոք ժանիքները և արդյոք ատամների մեջ կերակրի մնացորդ չի՞ գտնվել:

Հյոււրի Վորդին պատասխանեց հարցերին.

— Վոչվոք չի կարող ճանաչել այն գա-
զանի կաշին, վոր յես տեսել եմ: Միթե յես ա-
ռաջինը չեմ, վոր գտել եմ դրան:

Ակնոցավոր մարդը ծիծաղեց.

— Այն յերկրում, ուր ապրում են ոււաները,
թանգարաններ կան, և այդ թանգարաններում
կարելի յե տեսնել մամոնտի խրտվիլակը: Դու
առաջինը չես, վոր գտել ես նրան:

Հյոււրի Վորդին լռեց և լուռ առաջնորդեց
ակնոցավոր մարդուն իր գյուտի տեղը:

VI. ՅԵՐԲ ԵՆ ԼԱՅ ԼԻՆՈՒՄ ԱԶՔԵՐԻՆ ԱՊԱԿԻ ՈՒ- ՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ

Ելի քսան արեգակ բարձրացավ ովկիանոսի
սառցե ժայռի յետևից և նույնքան ել մայր մը-
տավ վոչ հեռու ովկիանոսի վարդագուլն տարա-
ծության մեջ: Սպիտակ գիշերները վողողվում
եյին ստվերներով, և կարապների վարդագուլն
ձագերն իրենց թևերի առաջին թափն եյին փոր-
ձում:

Մամոնտի վիթխարի դիակը դուրս յեկավ
գեանից: Առագաստավոր նավակն զգուշությամբ
մոտեցրին ափին և մամոնտին բարձեցին նրա
վրա, վոր սլոցել եյին մի քանի մասի և քարերի
եյին նման: Ակնոցավոր մարդը հավաքում եր

բրդի կտորները և թղթի յերկու թերթերի մեջ պահում եր այն խոտի մնացորդները, վոր գտնվել եր մամոնտի բերանում: Հյուրի Վորդին զարմանքով նայում եր ակնոցավոր մարդուն: Յերբ նավակի մոտից վերադառնում եյին կենդանու մի նոր կտորը տանելու, նա ասաց.

— Ապակիները քո աչքերը սրատես են դարձրնում, ինչպես արծվի աչքեր, բայց ականջներիդ դու ապակիներ չունես, իսկ յես տեսնում եմ փոթորկի մոտենալը: Հենց վոր մենք քո մամոնտը բարձենք, հրամայիր վոր նավակները կղզու յեանը տանեն, վորովհետև ովկիանոսը կղզուն կխփի սառցե սարեր, վորոնք քո նավակներն ավելի հեշտությամբ կտանեն ծովի հատակը, քան թե կարապը կարող ե իր գլուխը ջրի տակն անել:

Ակնոցավոր մարդը լսում եր և գլխով անում: Նա ման եր գալիս մամոնտի գերեզմանում և հավաքում եր բրդի կտորները, հողի կտորները արորում եր ձեռքի ասիերում և նրա համը փորձում:

Ամենից վերջը կենդանու գլուխը բարձեցին նավակին: Գլուխը տանում եյին չորս մարդով, ու նրանք ճկուտում եյին ծանրության սակ: Յեղջյուրի նման կեռ ժանիքը դրված եր Հյուրի Վորդու ուսերին, մամոնտի վզի յերկար բաշը

քարշ եր գալիս գետնին և փաթաթվում եր նրա վոտքերին:

Ակնոցավոր մարդը բռնում բարձրացնում եր այդ և փայլվող ապակիների միջով, հիացած ասում եր բերկրանքով.

— Միթե կարծում եք, վոր միայն Ռուսաստանը կիմանա մեր գյուտի մասին: Ամբողջ աշխարհը կխոսի նրա մասին և, շատ մարդիկ կգան Յակուտիա՝ նայելու մամոնտին և ուսումնասիրելու նրա բրդի ամեն մի կտորը: Հյուրի Վորդի, մենք մեր հայրենիքին մի այնպիսի նվեր ենք տանում, վորը աշխարհի բազմաթիվ գիտնականների ուշադրության կենտրոնը կլինի: Հյուրի Վորդի, դու և՛ խրճիթ կստանաս, և՛ գութան, և տնտեսություն:

Հյուրի Վորդին լսում եր և ասում.

— Շտապիր նավակը տանել: Ովկիանոսի ափը վտանգավոր ե այդպիսի նավի համար:

Բայց կենդանուն բարձելուց հետո զեռ պետք եր բարձել նաև այն հողը, վորի մեջ գրտել եյին նրան, և նրա գերեզմանի պատերը:

Իսկ մթնով տունգուսները չուզեցին տանել նավը, վորովհետև հաջողակ քամի չկար, և ափի մոտի ճանապարհն անվտանգ չեր: Աչքերին ապակի ունեցող մարդը նստած եր ափին և նայում եր հեռուն: Հյուրի Վորդին նրան իզուր եր

կանչում ուրաար, նա մնաց հսկելու նա՛վակին
և այն մարդկանց, վորոնք քնած եյին ափին—
խարույկի մոտ:

Գիշերն անսպասելի կերպով բարձրացավ ու-
կիանոսի քամին: Քամուց ու ցրտից մարդիկ արթ-
նացան: Հյուրի Վորդին դուրս յեկավ ափը՝ տես-
նելու համար, թե ինչպես պետք է խորտակվի
նավը:

Հեռավոր մթությունից դեպի կղզին եյին
դալիս սառցե ժայռերը—առագաստավոր նավի
արագությամբ:

Ակնոցավոր մարդը այդ մարդկանց մեջ այս
ու այն կողմն եր ընկնում, հրամայում եր ու
խնդրում. նրանք նայում եյին ու գլուխները
շարժում:

— Յորերը չեն սիրում, յերբ մարդիկ խան-
դարում են նրանց խաղը,—ասաց Հյուրի Վոր-
դին,—և այժմ վոչվոք չի կարող ստիպել վորևե
տունգուսի կամ յակուտի ափից ծովն իջնել:
Լռիք և սպասիր, կարող ե պատահել յորերը սա-
ռուցները կողքովն անց կացնեն:

Ակնոցավոր մարդը լռեց: Նա լռեց յերկար,
յորովհետև համոզվեց, վոր խնդիրներն ու հրա-
մաններն անողուտ են: Նա տեսնում եր, թե ինչ-
պես է ափին կապած նավակը կուշ յեկել, թե ինչ-
պես են սառցե ժայռերը մոտենում նրան, ու նա

տեսավ, վոր փայտե նավակը յերկար մնաց ջրի յերեսին, ինչպես տատանվում ու շուռ եր գալիս, և նա տեսավ, թե առաջին սառցե վիթխարի կտորը ճայթյունով ու աղմուկով նրան (նավակին) կես արավ, կտրեց:


Մառուցը դուրս սողաց ամբ, նավակի տաշեղներն անհետացան ջրի տակ: Ակնոցավոր մարդը դեմքը ծածկեց ձեռքերով և մինչև առավոտ այդպես անշարժ նստած եր:

Յերբ Հյուրի Վորդին նրա ձեռքերը հեռացրեց դեմքից և նայեց ապակիների տակի նրա աչքերին, նա այնտեղ տեսավ արցունքի խոշոր կաթիլներ, վոր վաղ առավոտյան լուսից փայլվում էին հյուսիսափայլի գույներով:

Հյուրի Վորդին ձեռքերը խաչեց կրծքին:

— Յես լաց չեմ լինում, թեև յես կորցրի՛ս իրճիթ, և՛ ուրիշ շատ բան, իսկ դու կորցրի՛ր միայն սատկածի՛ միս, վոր միայն շներին կերակրելու համար կարող եր պետք գալ:

Հյուրի Վորդին ձեռքերը խաչեց կրծքին և խղճահարուժյամբ նայում եր ակնոցավոր մարդուն: Նա չեր կարող հասկանալ, թե ինչ վիշտ կարող եր պատճառել մեռած կենդանու անպետք մսի կորուստը այն մարդուն, վոր լեռնային արծվի նման սրատես աչքեր ուներ:



82536 h

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038258

УРЪЕ 16 41464

(234)

А $\frac{1}{38258}$ 566

**Гушлевский
Кладбище Мамонтов**